
ՀԱՍՄՄԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ
hovsepyanhasmik91@gmail.com

**ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ՑԱՂԱԳՍ ԿՐՕՆԱԻՕՐԻ ՈՒՄԵՄՆ,
ՋՈՐ ՇԱՊՈՒՀ ԱՆՈՒԱՆԵՆ» ԹՈՒՂԹԸ**

Բանալի բառեր և արտահայտություններ. Գրիգոր Մագիստրոս, կրոնական թուղթ, Շապուհ կրոնավոր, ձեռագրական տարբերակներ, Հոբի գիրք, ծովային գազան, խոտոր ուղի, նեո, Նոյ Նահապետ:

Ключевые слова и выражения: Григор Магистрос, религиозное послание, монах Шапух, рукописные разночтения, книга Иова, морской зверь, извилистый путь, Антихрист, Патриарх Ной.

Keywords and expressions: Grigor Magistros, religious message, monk Shapuh, handwritten readings, book of Job, sea beast, winding path, Antichrist, Patriarch Noah.

Նախաբան

Գրիգոր Մագիստրոսի թղթերի ուսումնասիրության համակարգում կա մի կարևոր հանգամանք. վերջինիս գրական դիմագիծը յուրացնելու և ստեղծագործական առանձնահատկությունները վերհանելու տեսակետից սկզբունքորեն առանցքային են նրա բարդագույն գրվածքները ընկալելն ու վերաիմաստավորելը՝ իրենց կառուցվածքային և լեզվական հատկանիշներով: Այս իմաստով քննվող բնագիրը լինելու է «Յաղագս կրօնաւորի ումեմն, զոր Շապուհ անուանեն» թղթի չափածո մասը:

Հրաչյա Աճառյանն իր իսկ գնահատմամբ «անիմանալի» «Բառռականը» իբրև նմուշ «Բառռական բաղդատական բաղազանեալ բարգաւաճեալ» տողից մինչև վերջին՝ «Ներլուն նաւթ աննակին նոյեան նմին իւր պահապան» տողը դնում է անձնանունների բառարանի Մագիստրոսին վերաբերող բաժնում¹:

Ձեռագրերից մեկում թղթի չափածո հատվածը դրված է որպես առանձին ՁԱ թուղթ՝ «Նորին Գրիգորի»², որը հաջորդում է «Առ հեղգ աշակերտս յուսումն եւ հպարտս զոյ» թղթին:

¹ Աճառեան ³, Հայոց անձնանունների բառարան, հ.Ա, Երևան, 1942, էջ 550:

² Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ.հմբ. 3062, թերթ 581ա:

Թուղթն ունի կրոնական բովանդակություն և ուղղված է մի կրոնավորի, որին Շապուհ են անվանում, և որը Սևորդյաց նահանգից է: Այս Շապուհը, ըստ Մագիստրոսի, իսմայելական լեզվով կոչվում էր «Մաբուռն», եբրայեցիները կոչում էին «Մաուուղ», իսկ Սևորդյաց նահանգում անվանվում էր «Մեուուղ»: Սակայն պարզ չէ, թե ով է իրականում Մագիստրոսի գրչակիցը, նրա մասին Կ.Կոստանյանցը գրում է. «ԺԱ դարում Վասպուրական Սենեքերիմ արքայի զորավարը, Շապուհ, Ժամանակակից էր Մագիստրոսին, սակայն դժուար է ենթադրել, որ նա մի որ և է առնչություն ունենայ Շապուհ կրօնաւօրի կամ ԾԹ.թղթում յիշուած Մաբուռ Վռամեանի հետ»³: Թղթից հասկանում ենք, որ այն պատասխան նամակ է, որովհետև Մագիստրոսը գրում է՝ «առեալ զգիր ձեր, վերձանեայ»⁴, որից հետո խիստ մտահոգվում է և թղթին հանձնում իր մտքերը:

Մագիստրոսը վկայում է, որ այն կրոնավորը, որին դիմել է նամակում, ուղիղ ճանապարհից շատ է հեռացել և վտանգ է ներկայացնում իրեն «հնազանդ ծառայողներին: Ամենացավալին այն է, որ նա և իր համախոհներն, իրենց իմաստուն կարծելով, շատ աղետների պատճառ են դառնում: Սա անշուշտ եկեղեցուց հեռանալու հետևանք է, իսկ եկեղեցին, ինչպես բացատրում է Մագիստրոսը նամակում, տեղ և պատճառ է մարդկանց փրկության, և այս իմաստով խնդրո առարկա թղթի հասցեատերերը բոլոր նրանք են, ովքեր չունեն այս ըմբռնումը, հետևաբար «խտտորեալ յուղիղ գնացից բազում տարագրութիւն ծնանի»⁵:

Բովանդակության ընկալման տեսակետից թղթի ամենից բարդ և հետաքրքրական մասերը չափածո հատվածներն են, որոնք առաջին հայացքից առեղծված են թվում և ունեն գիտական հիմնավորման անհրաժեշտություն: Մեր հոդվածի նպատակն այն հստակ աղբյուրի բացահայտումն է, որից օգտվել է Մագիստրոսը կամ որը սկզբունքորեն եղել է նրա տեսադաշտում, ինչպես նաև դրանից օգտվելու եղանակներն ու նրբությունները վերհանելը:

Բողանդակություն

Ստորև ներկայացնենք չափածոյի բնագիրը՝ տալով անհրաժեշտ մեկնաբանությունները, թարգմանությունը հիմնված է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»⁶ երկու հատորների վրա, ինչպես նաև օգտվել ենք

³ Կոստանեանց Կ., Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Աղեքսանդրապոլ, 1910, էջ 133:

⁴ Մատենագիրք հայոց, հ.ԺԶ, ԺԱ. դար, Երևան, 2012, էջ 319:

⁵ Նույն տեղում:

⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ, 1836: Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, Վենետիկ, 1837:

«Առձեռն բառարան հայկազնեան լեզուի»⁷ գրքից: Ներկայացրել ենք նաև գրականագետ Գոհար Մուրադյանի կազմած քննական բնագրից որոշակի տարբերություններ դրսևորող տարբերակներ, որոնք կարևոր են քննվող բնագիրը հասկանալու տեսակետից.

Բնագիր	Աշխարհաբար թարգմանություն՝ աղբյուրների հիշատակմամբ
<i>Կէտ կարթիւ, արտակիտի քեզ աւաղիկ ի կախ կորգեալ,</i>	Առաջին տողը թարգմանում ենք այսպես. Կէտը կարթով կրոնն՝⁸ և դուրս կձգն՝⁹ ։ Հոբի գրքում Աստված վերջինիս է ներկայացնում ծովի հսկա և գորեղ վիշապի կյանքը՝ իր խոսքը սկսելով այն հարցադրմամբ, թե նա կարող է արդյոք կարթով բարձրացնել վիշապին («Վերացուցանիցն՝⁸ և զվիշապն կարթիւ»⁸)։ Ծովի վիշապը կամ ծովային գազանը հնագրության մեջ ընկալվում է Լեւիաթան ձուկը՝ «մեծ քան զամենայն կէտս և զվիշապ ձկունս» ⁹ , որը առանձնահատուկ տեղ է զբաղեցրել Մագիստրոսի՝ առասպելական պատմություններով հարուստ թղթերի համակարգում:
<i>Կաշկանդեալ, կոչեալ, կոփեալս, կողկոճահոսն առասանեալ,</i>	<i>Կաշկանդեմ՝</i> «պնդապես կապել քարշելով, պրկել, արգելով և պնդել անշարժ» ¹⁰ , <i>կոչեալ</i> ՝ քննական բնագրի տողատակում գտնում ենք <i>կաշեալ</i> ¹¹ տարբերակը. <i>կաշիմ</i> ՝ «պնդանալ որպես կաշի,

⁷ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

⁸ Տե՛ս 30վր Խ., 20:

⁹ Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հ. 1, էջ 884:

¹⁰ Նույն տեղում, էջ 1052:

¹¹ Մատենագիրք հայոց, հ.ԺԶ, ԺԱ. դար, էջ 319:

	բրտանալ»¹², <i>կոփեմ</i>՝ «հարթել, տաշել, կոկել»¹³, <i>կողկոճահոսն</i>՝ 1741, 3062, 3068, 4232 ձեռագրերում ընդօրինակված է <i>կողկոջահոսն</i>¹⁴, «Հազարտողեան» ստեղծագործության մեջ այս բառը կա <i>կաղկաջահոս</i> տարբերակով, իսկ տաղասացության ընդօրինակումներից մեկում <i>կարկաջահոս</i> տարբերությունն ենք գտնում. «Աղբիւր քաղցրաճաշակ կարկաջահոս ի վրտակին»¹⁵: <i>Կարկաջահոս</i> «որ կարկաջէ՝ ի հոսելն, կամ սահի կարկաջիւք»¹⁶, իսկ <i>կարկաջուն/կարկաչուն</i>՝ «կարկաչօղ, ճչօղ, կականօղ, ըստ քերթողաց է անուն տարատարոսական գետի»¹⁷: <i>Առասանեմ</i>՝ «առասանաւ ձգել. չունանով՝ թելով բռնել քաշել»¹⁸: Նրա ամուր կպած անդամները կարո՞ղ ես չվանով բռնել ու դուրս քաշել կարկաջահոս գետից: Համընկնում է Հոբի գրքի այն հատվածին, երբ վիշապի մասին ասվում է, որ նրա մարմնի անդամները ամուր են կպած իրար.«Անդամք մարմնոյ նորա մածեալք»¹⁹:
<i>Կախեալ ի կոհակաց ականակիտ կիտին հասեալ,</i>	Կախվելով ականակիտ կոհակներից՝ կետին կիսանն ս,

¹² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 1052:

¹³ Նույն տեղում, էջ 1026:

¹⁴ ՄՄ ձեռ. հմր.1741, թերթ 403ա, հմր. 3062, թերթ 581ա, հմր. 3068, թերթ 123ա, հմր. 4232, թերթ 332: Հմր.3293 ձեռագրում գրված է *կողկոճահոսն* (թերթ 222), սակայն նույն ձեռագրում ընդօրինակված երկրորդ տարբերակում՝ *կողկոջահոսն* (թերթ 337):

¹⁵ ՄՄ ձեռ. հմր.3172, թերթ 219բ:

¹⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 1071:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 292:

¹⁹ Տե՛ս և Յովբ ԽԱ., 14:

<i>Կեփայեան կիտին կամաւ կարեաց կրից ներհուն եղեալ:</i>	<i>Կեփայան՝ «վիմական»²⁰ (կարծր), կարեաց՝ կարիք բառի սեռական հոլովը՝ «կիրք մարմնոյ և հոգւոյ, ախտ, մարդկային տկարութիւն»²¹, կրից՝ կիրք բառի սեռականը՝ «որպէս վիշտ, չարչարանք, անցք, այլայլութիւն զգայական, յօժարութիւն»²², ներհուն՝ «հմուտ, հասու, իրագեկ, գիտակ, ծանօթ՝ որպէս ճանաչող»²³: 1741, 3062 և 3068 ձեռագրերում՝ կերհուն²⁴:</i> Կարծր կէտին ճանաչելով՝ դու քո հոժարությամբ կկամենա՞ս ս տկարությունդ ցույց տալ: Աստվածաշնչյան աղերսը ակնհայտ է, երբ Աստված նկարագրում է վիշապի ուժը, Հոբին հավատացնում է, թե նա այնքան զորեղ է, որ եթե անգամ երանելին կամենա ձեռքը մոտեցնել վիշապին, կմտաբերի այն պայքարը, որը տեղի է ունենալու նրա մարմնի մեջ ու այլևս չի անի («Դնիցես դու զձեռքն քո ի վերայ նորա, զի, յիշատակեալ զպատերզամ որ լինելոց է ի մամնի նորայ, զի այլ ո՛չ ևս լինիցի»²⁵), ճիշտ այնպես, ինչպէս Մագիստրոսի հարցադրումն է, թե կկամենա արդյոք կրոնավորը, որին դիմում է
---	---

²⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 823:

²¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 1069:

²² Նույն տեղում, էջ 1100:

²³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 420:

²⁴ ՄՄ ձեռ.հմր.1741, թերթ 403ա, հմր.3062, թերթ 581ա, հմր.3068, թերթ 123ա.:

²⁵ Տե՛ս Յովք Խ., 27-28:

	նամակում, ճանաչելով կետին, նրան իր տկարությունը ցույց տալ:
<i>Տրամախոհ տարադրական տատանական տողեալ տողեալ,</i>	<i>Տրամախոհ՝ «ուշիմ, խոհեմ, իմաստուն, հանճարեղ, զգօն»²⁶, հմր.1741 ձեռագրում ընդօրինակված է բազմախոհ²⁷ տարբերակը: Տարադրական՝ «խոտորեալ տարադեպ»²⁸, խոտորեմ՝ «դարձուցանել, շեղել»²⁹, տարադեպ՝ «անդեպ, անպատեհ, անվայել»³⁰: Տատանական՝ «տատանելի, տատանիչ»³¹, տողեմ՝ «շարել, դասաւորել, հիւսել»³², քննական բնագրի տողատակում գտնում ենք կադեալ³³, իսկ հմր.4232 ձեռագրում՝ տադեալ³⁴ տարբերակները, տողիմ՝ «տենչալ անյագաբար»³⁵, քննական բնագրի տողատակում հանդիպում ենք ենք բոգեալ³⁶ տարբերակին, բոգ նշանակում է՝ «խոտ բժշկական»³⁷: Խոհեմ գտնվիր, կասկածելի անհագ տենչով անվայել գրիցդ հրաժարվիր:</i>

²⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 896:

²⁷ ՄՄ ձեռ.հմր.1741, թերթ 404ա:

²⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 851:

²⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 970:

³⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 851:

³¹ Նույն տեղում, էջ 849:

³² Նույն տեղում, էջ 888:

³³ Մատենագիրք հայոց, հ.ԺԶ, ԺԱ. դար, էջ 319:

³⁴ ՄՄ ձեռ.հմր.4232, թերթ 334:

³⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 887:

³⁶ Մատենագիրք հայոց, հ.ԺԶ, ԺԱ. դար, էջ 319:

³⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 500:

	Պարզ է, որ այս կրոնավորը Մագիստրոսին նամակ էր գրել, որտեղ մերկացրել էր իր անխամաստասեր վարքն ու խոտոր հավատը:
<i>Տարադատ տանտաղական տիւրենական տարակուսեալ,</i>	<i>Տարադատ</i> ՝ «տարօրինակ դատաստանաւ դատեալ կամ վարանական մտօք» ³⁸ , <i>տանտաղական կամ տանտալական</i> ՝ «սեպիական տանտաղոսի արքայի փոփոցացոց» ³⁹ «փոփոցացոց Տանտաղոս թագաւորին» ⁴⁰ , <i>տիւրենական</i> ՝ «այդպէս էին հոյներն անվանում Իտալիայի հնագոյն բնակիչներին՝ էտրուսկներին» ⁴¹ : <i>Տարակոյս</i> ՝ «կարօտութիւն, չքաւորութիւն, խեղճութիւն, անյոյս մնալը» ⁴² : Փոփոցացիների և էտրուսկների նման մի դատապարտիւր քեզ անհուսությամբ:
<i>Տիրապէս տրամադրութեան տորբանականդ ի քէն տոգեալ:</i>	<i>Տիրապէս</i> ՝ «տիրաբար, իշխանաբար» ⁴³ , <i>տրամադրութիւն</i> ՝ «յօժարութիւն, պատրաստականութիւն» ⁴⁴ , <i>տորբանական</i> ՝ «երկարաբան» ⁴⁵ , «մութ՝ երկայն բան» ⁴⁶ : Իշխանական հոժարությամբ մութ ու երկար անհազ տենչով խոսքդ լսեցի քեզնից:
<i>Բառոսկան բաղդատական բաղազանեալ</i>	<i>Բառոսկան</i> ՝ կարծում ենք բառ բառն է <i>ական</i> վերջածանցի հետ՝ «բարբառ, լեզու» ⁴⁷ , <i>բաղդատական</i> ՝ «համեմատական» ⁴⁸ , <i>բաղազանեմ</i> ՝

³⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 851:

³⁹ Նույն տեղում, էջ 844:

⁴⁰ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, էջ 772:

⁴¹ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2014, հ.20, էջ 29:

⁴² Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, էջ 776:

⁴³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 877:

⁴⁴ Նույն տեղում, էջ 896:

⁴⁵ Նույն տեղում, էջ 890:

⁴⁶ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, էջ 790:

⁴⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 439:

⁴⁸ Նույն տեղում, էջ 427:

<i>բարգաւաճեալ:</i>	«յարել, յարմարել, միաւորել, կցորդել, համեմատել»⁴⁹: [Կետը] Քեզ հետ կիսուի՞ համեմատություններով լի, ծաղկուն լեզվով, քեզ կմիավորվի՞: Այս հատվածում նույնպես գտնում ենք Հոբի գրքի ազդեցության հետքեր: Աստված ասում է Հոբին, թե արդյոք վիշապը կիսուի նրա հետ հեզությամբ, քաղցր լեզվով, նրա հետ ուխտ կդնի, թե ոչ. «խօսիցի՞ ընդ քեզ հեզութեամբ. և կակոտ բարբառով դնիցէ ընդ քեզ ուխտ»⁵⁰:
<i>Բարառաբար բախտական ներբուն բայի շարամանեալ,</i>	<i>Բարառաբար/բարառնաբար՝ «ձևացուցանելով զբարս»⁵¹, բախտական՝ այս ձևը հայտնի չէ, բառարանում կա բաղխտական տարբերակը՝ «համախտական»⁵², 3293 ձեռագրում ընդօրինակված է երկու անգամ՝ տարընթերցումներով, առաջին տարբերակում՝ բախտական⁵³, երկրորդում՝ բառ խտական⁵⁴, ներբուն՝ «բուն իսկ»⁵⁵, բայ/ի՝ ունի հետևյալ ենթիմաստները՝ «բան, խօսք, բարբառ»⁵⁶, շարամանեալ՝ «ներհիւսել, միաւորել, նիւթել»⁵⁷: Թե՞ խոսքդ կմիավորես նրան՝ ձևացնելով բարքդ, թե իբր միաբան ես:</i>

⁴⁹ Նույն տեղում, էջ 425:

⁵⁰ Տե՛ս Գովք Խ., 22-23:

⁵¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 441:

⁵² Նույն տեղում, էջ 428:

⁵³ ՄՄ ձեռ.հմբ.3293, թերթ 223:

⁵⁴ Նույն տեղում, թերթ 338:

⁵⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 416:

⁵⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 431:

⁵⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 471:

<i>Բարեհամ բուծող հլու բարշոկ գեղոյ ձեզ ընձեռեալ,</i>	<i>Բարեհամ՝ «համեղ, քաղցրահամ, ախորժաճաշակ, անուշ»⁵⁸, բուծանեմ՝ «սնուցանել»⁵⁹, բարշոկ՝ բարշ/բաշ՝ «ձի՝ պսակաձև յօրինուածով զարդարեալ՝ խիտ և հրաշալի բարշին բարեմասնութեամբ»⁶⁰:</i> Դո՞ւ ես ձիերին շնորհել խիտ և գեղեցիկ բաշ, դո՞ւ ես նրանց հնազանդ դարձրել, անուշահամ կերակո՞ւր ես տվել նրանց: Համեմատենք աստվածաշնչյան հատվածի հետ. «Եթէ դո՞ւ ագուցեր ձիոյ զօրութիւն, և զգեցուցեր զրահ ընդ պարանոցաւ նորա.արկեր զնովաւ սպառազինութիւն, և փառս լանջաց նորա զյանդգնութիւն»⁶¹:
<i>Բեղեկ բազմակ բեղուն բակաղեթիւ քեզ նուիրեալ:</i>	<i>Բեղեկ՝ «նորոգութիւն խարխալեալ շինուածոյց, կազմած կամ խախտած»⁶², բազմակ՝ «ճրագ, մոմ, լապտեր»⁶³, բեղուն՝ «պտուղ, սերմն, ծնունդ, արդիւնք»⁶⁴, բակեղաթ/բակեղէթ՝ «պարկ, քսակ, տոպրակ, մախաղ»⁶⁵:</i> Հավատդ խարխլված է, քեզ եմ նվիրում ճրագի սերմերով քսակ:

⁵⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 451:

⁵⁹ Նույն տեղում, էջ 511:

⁶⁰ Նույն տեղում, էջ 467:

⁶¹ Տե՛ս 3ովբ ԼԹ.19-21:

⁶² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 479:

⁶³ Նույն տեղում, էջ 407:

⁶⁴ Նույն տեղում, էջ 480:

⁶⁵ Նույն տեղում, էջ 425:

<i>Ներուն նամակ նիտան նորին նաքոր անբուժական,</i>	<i>Ներուն</i>՝ ներունիմ բայի հիմքն է՝ «ընդունել, վերընդունել»⁶⁶, <i>նիտան</i>՝ 1741, 3062, 3068, 4232 ձեռագրերում՝ նամակն ի տան⁶⁷, <i>նորին</i>՝ <i>նոյն</i> դերանվան սեռական հոլովը, <i>նաքոր</i> բառը գրաբարի բառարաններում չկա, Գ. Զահուկյանի ստուգաբանական բառարանում դրված է որպես անստույգ բառ՝ «վիշտ»/ Անստույգ բառ: Ծագումն անհայտ է»⁶⁸: Ընդունիք գիրս քո իսկ անբժշկելի վշտի մասին:
<i>Նախբուն նուէր նիսեան նմին նետիւ անփտական,</i>	<i>Նախբուն</i>՝ անստույգ է, բառի բաղադրիչներն առանձին վերցված՝ <i>նախ</i>՝ «առաջին, գլխաւոր, նախկին»⁶⁹, <i>բուն</i>՝ «սկիզբն, արմատ, պատճառ, հիմն, աղբիւր, ծայր, գլուխ, բնիկք և նախնիք»⁷⁰, <i>նուէր</i>՝ «զոհ»⁷¹, 3062 ձեռագրում՝ <i>նրւ</i>⁷² տարբերակը, <i>նիսեան/նէեղաս/նէեսա</i>՝ «անուանք թոչնոց անծանօթից»⁷³, <i>անփտական/անփուտ</i>՝ «անփտելի, կարծր, երկարատև»⁷⁴: Կզոհե՛ս քեզ կարծր նետով, ինչպես ի սկզբանե նէեսանը: Այս թոշունը հիշատակվել է Հոբի գրքում, այն գեղեցիկ թներ ունի, բայց երբ իր ձվերը գետնին է դնում, մոռանում է, թե անապատի գազանների կեր կդառնան և չի վախենում կորցնել իր վաստակը. «Թեք թռուցելոց նէեղասաց. եթէ հղասցի ասիդն և նէեսայն: Զի արկցէ յերկիր գծուս

⁶⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 421:

⁶⁷ ՄՄ ձեռ.հմր.1741, թերթ 404ա (այս ձեռագրում նամակը առանց *ն* հոդի է՝ նամակ ի տան), հմր.3062, թերթ 581ա, հմր.3068, թերթ124ա, հմր.4232, թերթ 334:

⁶⁸ Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 564:

⁶⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 384:

⁷⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 511:

⁷¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 451:

⁷² ՄՄ, ձեռ.հմր.3062, թերթ 581ա:

⁷³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 424:

⁷⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 253:

	իւր, և ջեռուսցէ զհողով. և մոռացաւ թէ ուր ցրուիցէ. և գազանք անապատի կոխեսցեն: Ուծացաւ յորդոց իւրոց՝ իբրև ո՛չ յիւրմէ.ի զո՛ւր վաստակեցաւ առանց երկիւղի»⁷⁵: Մագիստրոսն ակնարկում է, թէ արդյոք կրոնավորը զոհելու է իրեն, ինչպէս նէեսանը իր ձագերին է զոհում:
<i>Ներձուն նպաստ նաջան նեռին նարին կիզողական.</i>	<i>Ներձուն</i>՝ անստույգ բառ՝ առանձին բաղադրիչների իմաստները՝ <i>ներ</i> և <i>ձունեմ/ձօնեմ</i> բայի հիմքը՝ «նուիրել, մատուցանել, ընծայել, պատարագել, կատարել»⁷⁶, <i>նպաստ</i>՝ «գործակցութիւն, սատար, օգուտ, շահ, պէտք և ջան, փոյթ, հայթայթանք, պիտանութիւն կամ սատար՝ որպէս օգնական, ձեռնտու, գործակից»⁷⁷, <i>նաջան</i>՝ անհայտ բառ է, դարձյալ առանձին բաղադրիչների իմաստների սկզբունքով կունենանք հետևյալը՝ <i>նա</i>՝ «մանավանդ թէ.բայց արդ.արդարև.իսկ.այլ.թո՛ղ»⁷⁸, <i>ջան</i>՝ «ճիգն, փոյթ, աշխատութիւն»⁷⁹, քննական բնագրի տարընթերցումներից մեկում կա <i>նուերնաջան</i> տարբերակը⁸⁰, <i>նեռին</i>՝ «հակառակ Քրիստոսի կամ փոխանակ Քրիստոսի, սուտ Քրիստոս»⁸¹, <i>նարին</i>՝ անստույգ է, բառարանում գտնում ենք՝ ներ/ներք ձևերը՝ «դար մը, երկայն տարիներ»⁸², <i>կիզողական</i>՝

⁷⁵ Տե՛ս Թ. 30:13-17:

⁷⁶ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 162:

⁷⁷ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 453:

⁷⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 383:

⁷⁹ Նույն տեղում, էջ 670:

⁸⁰ Մատենագիրք հայոց, հ.ԺԶ, ԺԱ. դար, էջ 320:

⁸¹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 413:

⁸² Առձեռն բառարան հայկազեան լեզուի, էջ 613:

	«կիզկիչ կիզողական հուր կամ զօրութիւն, կամ փորձութիւն»⁸³։ Արդարև, սուտ Քրիստոսն իր կիզիչ զորությամբ, հակառակ քո ջանքերին, քեզ իրեն գործակից է դարձրել:
<i>Ներլուն նախան նակին նոյեան նմին իւր պահապան:</i>	<i>Ներլուն</i>՝ կարծում ենք՝ կապված է <i>ներել</i> բայի հետ՝ «շնորհել՝ քաւել զյանցանս, անսալ, խնայել, հանդուրժել, համբերել»⁸⁴, <i>նախան նակին</i>՝ քննական բնագրի տողատակում՝ <i>նախնան</i>⁸⁵ ձևը, 1741 ձեռագրում հանդիպում է <i>նօթճան նակին</i>⁸⁶, իսկ 3062 ձեռագրում՝ <i>նօթճան նախկին</i>⁸⁷ ընդօրինակումները: <i>Նօթճեմ/նախճեմ</i>՝ «աւետիչ կամ նիւթիչ լինել, ծանուցանել, աւետել, բարբառել»⁸⁸: <i>Նոյեան նմին</i>՝ ձեռագրերում հանդիպում ենք <i>Նոյեանն ընկ</i>⁸⁹ ընդօրինակությամբ, <i>նոյեան</i>՝ «սեպհական Նոյի Նահապետի և աւուրց նորա»⁹⁰, «Նոյ Նահապետին յատուկ»⁹¹։ Բայց եթե մեր նախնի Նոյ Նահապետին ապավինես, քեզ ներում կշնորհվի:

Ներկայացնենք աշխարհաբարի վերածված տեքստը՝

Կետը կարթով կրոնէ՞ս և դուրս կձգէ՞ս:

Նրա ամուր կպած անդամները կարո՞ղ ես չվանով բռնել ու դուրս քաշել կարկաչահոս գետից:

Կախվելով ականակիտ կոհակներից՝ կետին կհասնէ՞ս,

Կարծր կետին ճանաչելով՝ դու քո հոժարությամբ կկամենա՞ս տկարությունդ ցույց տալ:

⁸³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, էջ 1096:

⁸⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 417:

⁸⁵ Մատենագիրք հայոց, հ.ԺԶ, ԺԱ. դար, էջ 320:

⁸⁶ ՄՄ ձեռ.հմբ.1741, թերթ 404ա:

⁸⁷ ՄՄ ձեռ.հմբ.3062, թերթ 581բ:

⁸⁸ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 456:

⁸⁹ ՄՄ ձեռ.հմբ.3068, թերթ 124ա, հմբ.4232, թերթ 335:

⁹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.2, էջ 439:

⁹¹ Առձեռն բառարան հայկազեան լեզուի, էջ 621:

*Խոհեմ գտնվիր, կասկածելի անհագ տենչով անվայել գրիցդ հրաժարվիր:
Փոյուզացիների և էտրուսկների նման մի դատապարտիր քեզ
անհուսության:*

*Իշխանական հոժարությամբ մութ ու երկար անհագ տենչով խոսքդ լսեցի
քեզնից:*

*[Կետը] Քեզ հետ կխոսի՝ համեմատություններով լի, ծաղկուն լեզվով, քեզ
կմիավորվի՝*

Թե՞ խոսքդ կմիավորես նրան՝ ձևացնելով բարքդ, թե՞ իբր միաբան ես:

*Դո՞ւ ես ձիերին շնորհել խիտ և գեղեցիկ բաշ, դո՞ւ ես նրանց հնազանդ
դարձրել, անուշահամ կերակո՞ւր ես տվել նրանց:*

Հավատդ խարխլված է, քեզ եմ նվիրում ճրագի սերմերով քսակ:

Ընդունիր գիրս քո իսկ անբժշկելի վշտի մասին:

Ձոռելո՞ւ ես քեզ կարծր նետով, ինչպես ի սկզբանե նէսանը:

*Արդարև, սուտ Քրիստոսն իր կիզիչ գորությամբ, հակառակ քո ջանքերին,
քեզ իրեն գործակից է դարձրել:*

Բայց եթե մեր նախնի Նոյ Նահապետին ապավինես, քեզ ներում կշնորհվի:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Մագիստրոսի թղթերի բարդ ու ստեղծարար լեզուն ուսումնասիրվող բնագրում վերածվել է խորհրդավոր գրվածքի, որի շուրջ սկզբունքորեն անհրաժեշտ դիտարկումներն ունեն համակարգային բնույթ: Դժվարամատչելի լինելուց բացի՝ լեզվառճական տեսակետից ուշագրավ է բաղաձայնության կիրառությունը, որը տիրապետում է չափածոյի բոլոր հատվածներում: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ բնագիրը հիմնովին յուրացնելու բանալին Հոբի գիրքն է: Մագիստրոսն օգտագործել է աստվածաշնչյան գիտելիքները՝ այլաբանորեն ներկայացնելով իր խոսքը մի կրոնավորի, որին ուզում է ճիշտ ուղու վրա բերել այնպես, ինչպես Աստված՝ Հոբին:

Եզրակացություն

Քննվող բնագրի հետազոտության արդյունքում բացահայտել ենք այն հստակ աղբյուրը, որին ստեղծագործաբար մոտեցել է հեղինակը: Գր.Մագիստրոսի բարդ գրվածքը հասկանալու և վերլուծելու համար՝ դիտարկել ենք վերջինիս ստեղծագործական առանձնահատկությունները՝ ընդգծելով կառուցվածքային և լեզվական հատկանիշները: Դժվարամատչելի լինելուց բացի՝ լեզվառճական տեսակետից ուշագրավ է բաղաձայնության կիրառությունը, որը տիրապետում է չափածոյի բոլոր հատվածներում: Այսպես՝ առաջին չորս տողերում կրկնվում է **կ** տառը, հինգերորդից յոթերորդ տողերում՝ **տ**, ութերորդից տասնմեկերորդ տողերում՝ **բ**, վերջին չորս տողերում՝ **ն** տառերը:

Բնագիրը վերածել ենք աշխարհաբար տեքստի՝ հիմնվելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկու հատորների, ինչպես նաև «Առձեռն

բառարան հայկազնեան լեզուի» գրքերի վրա՝ այն հասկանալու տեսակետից կարևորելով նաև քննական բնագրից որոշակի տարբերություններ դրսևորող տարրնթերցումներ:

Գր. Մագիստրոսի ստեղծագործությունը նաև հասկանալիում է այն տեսակետից, որ նրա ստեղծարար ու բարդ խոսքը կառուցված է այլաբանորեն: Ուսումնասիրության ընթացքում պարզ է դառնում, որ վերջինիս խորհրդավոր գրվածքը հիմնովին յուրացնելու բանալին Հոբի գիրքն է: Մագիստրոսն օգտագործել է աստվածաշնչյան գիտելիքները՝ այլաբանորեն ներկայացնելով իր բարդ խոսքը մի կրոնավորի, որին ուզում է դարձի բերել Հոբի օրինակով: Այս տեսակետից Շապուհ անունով կրոնավորին ուղղված թուղթը ձեռք է բերում ոչ միայն ճանաչողական, այլև ուսուցողական մեծ արժեք, քանի որ մի կողմից Մագիստրոսն ինչպես մի շարք այլ գործերում, այնպես էլ ուսումնասիրվող թղթում արծարծում է ժամանակի աստվածաբանական խնդիրները, մյուս կողմից՝ ընդգծում է իր պատրաստակամությունը՝ դարձի բերելու անիմաստաբար և անխոհեմ կերպով եկեղեցուց հեռացած կրոնավորներին:

Асми́к Овсепя́н

Послание Григора Магистроса “Некому монаху по имени Шапух”

Резюме

В результате исследования обсуждаемого текста мы определили четкий источник, к которому автор подошел творчески. Чтобы понять и проанализировать сложное сочинение Григора Магистроса, мы рассмотрели его творческие особенности, подчеркнув структурные и языковые характеристики. Помимо труднодоступности, с лингвистической и стилистической точек зрения, примечательно использование согласных, которые преобладают во всех частях стихотворного слога. Так, в первых четырех строках повторяется буква **կ**, в строках с пятой по седьмую — **ս**, в строках с восьмой по одиннадцатую — **բ**, в последних четырех строках — **ի**.

Мы перевели текст на современный армянский язык, основываясь на двух томах “Нового словаря армянского языка”, а также на книгах “Учебный словарь армянского языка”, а с точки зрения его понимания, обращая внимание на разночтения, имеющие определенные отличия с критическим текстом.

В ходе изучения становится ясно, что ключом к освоению таинственного сочинения последнего является книга Иова. Магистрос использовал библейские знания, иносказательно преподнося свою сложную речь религиозному лицу, которого он хотел обратить по примеру Иова. С этой точки зрения письмо, адресованное религиозному лицу по имени Шапух, приобретает не только познавательное, но и большое воспитательное значение, поскольку с одной стороны Магистрос, в изучаемом письме, как и ряде других трудах, обсуждает богословские проблемы того

время, а с другой стороны, он подчеркивает свою готовность обращаться тех религиозных лиц, кто необоснованно и безрассудно покинул церковь.

Hasmik Hovsepyan

The Message of Grigor Magistros to “Some Monk Named Shapouh”

Summary

As a result of the study of the text under discussion, we identified a source to which the author approached creatively. In order to understand and analyze the complex work of Grigor Magistros, we examined its creative features, highlighting structural and linguistic characteristics. In addition to the difficulty of access, from the linguistic and stylistic points of view, the use of consonants, which prevails in all parts of the poetic word, is noteworthy. Thus, the letter **h** is repeated in the first four lines, **u** in the fifth to seventh lines, **p** in the eighth to eleventh lines, and **h** in the last four lines.

We have translated the text into modern Armenian language, basing upon two volumes of the "New Dictionary of the Armenian Language", as well as on the books of "Manual Dictionary of the Armenian Language", and paying attention, from the point of view of understanding it, to the readings that present certain differences with the critical text.

The work of G. Magistros is also characterized by the point of view that his creative and complex speech is built allegorically. In the course of the study, it becomes clear that the key to mastering the mysterious composition of the latter is the book of Job. Magistros used biblical knowledge, allegorically presenting his complex speech. From this point of view, a letter addressed to a religious person named Shapuh acquires not only cognitive, but also great educational value, since, on the one hand, Magistros, in the letter under study, as well as in a number of other works, discusses the theological problems of that time, and, on the other hand, he emphasizes his readiness to convert those religious persons who left the Church unreasonably and recklessly.

Խմբագրություն է ուղարկվել 23. 06. 2022թ.

Հանձնարարվել է գրախոսության 10. 07. 2022թ.

Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.